Արձանագրություն N 3

«ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2022-01» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 02 փետրվարի 2022թ.

Ժամը 12:00

Մասնակցում էին հանձնաժողովի

Նախագահ՝ Ա.Մանուչարյան

Անդամներ՝ Գ.Սաքոյան, Գ.Սաֆարյան

Քարտուղար՝ Ս.Պապիկյան

Բացակայում էր՝

**«ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2022-01» ծածկագրով գնման ընթացակարգի ամփոփման վերաբերյալ**

1. **Միաժամանակյա գնային բանակցություններ վարելու վերաբերյալ՝**

1.1 Գնային բանակցությունների մասնակցել են «Լեյկո» ՍՊ, «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊ ընկերությունները (գնի նվազեցման առաջարկները ուղարկել են էլ. փոստով), «ՊՐՈ-ՄԵԴ ՊԼՈՒՍ» ՍՊ ընկերությունը, որի արդյունքում.

«Լեյկո»,ՍՊ ընկերությունը՝

✓ 1-ին չափաբաժնի համար գինը նվազեցրել է 4 560 ՀՀ դրամով, առաջարկելով 25 440 ՀՀ դրամ:

«ԹԱԳ ՀԷՄ» ՍՊ ընկերությունը՝

✓ 16-րդ չափաբաժնի համար գինը նվազեցրել է 1 000 ՀՀ դրամով, առաջարկելով 1 500 ՀՀ դրամ:

«Պրո Մեդ Պլուս» ՍՊ ընկերությունը՝

✓ 7-րդ չափաբաժնի համար գինը նվազեցրել է 205 500 ՀՀ դրամով, առաջարկելով 190 500 ՀՀ դրամ:

✓ 9-րդ չափաբաժնի համար գինը նվազեցրել է 223 200 ՀՀ դրամով, առաջարկելով 436 800 ՀՀ դրամ:

✓ 11-րդ չափաբաժնի համար գինը նվազեցրել է 540 000 ՀՀ դրամով, առաջարկելով 660 000 ՀՀ դրամ:

✓ 12-րդ չափաբաժնի համար գինը նվազեցրել է 186 000 ՀՀ դրամով, առաջարկելով 210 000 ՀՀ դրամ:

✓ 13-րդ չափաբաժնի համար գինը նվազեցրել է 1 044 000 ՀՀ դրամով, առաջարկելով 1 356 000 ՀՀ դրամ:

**Հաշվի առնելով.**

«ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2022-01» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկը, ինչպես նաև այն հանգամանքը, որ «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊ ընկերության կողմից №№ 16, 18, 21-24, «Լեյկո» ՍՊ ընկերության կողմից №№ 2, 4, «Պրո Մեդ Պլուս» ՍՊ ընկերության կողմից №№ 7, 9, 11-13 չափաբաժինների համար ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը գնահատվում են համարժեք:

**2. Հանձնաժողովը որոշեց.**

2.1 Հաղթող ճանաչել՝ «Լեյկո» ՍՊ, «Պրո Մեդ Պլուս» ՍՊ և «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊ ընկերություններին:

2.2 Մինչև 08.02.2022թ. ներառյալ սահմանել անգործության ժամկետ, որից հետո պայմանագիր կնքելու առաջարկություն ներկայացնել «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊ ընկերությանը՝ 401 500 / չորս հարյուր մեկ

հազար հինգ հարյուր / ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, «Պրո Մեդ Պլուս» ՍՊ ընկերությանը՝ 2 853 300 / երկու միլիոն ութ հարյուր հիսուներեք հազար երեք հարյուր / ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, «Լեյկո» ՍՊ ընկերությանը՝ 25 968 / քսանհինգ հազար ինը հարյուր վաթսունութ / ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն ՀՀ դրամ գումարի չափով:

2.3 «ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2022-01» ծածկագրով ընթացակարգը չկայացած համարել.

✓ №№ 8, 10, 14, 15, 19, 20 չափաբաժինների մասով՝ նախահաշվային գնից բարձր լինելու հիմքով:

✓ №№ 1, 3, 5, 6, 17 չափաբաժինների մասով՝ գնային առաջարկ չստանալու հիմքով:

Ընդունվել է որոշում՝
Կողմ՝ 3 Դեմ՝ 0

**Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ստորագրությունները**

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի Նախագահ՝ | ______________ | Ա.Մանուչարյան |
| Անդամներ՝ | ______________ | Գ.Սաքոյան |
| | ______________ | Գ.Սաֆարյան |
| Քարտուղար՝ | ______________ | Ս.Պապիկյան |